Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,

բողոքների 2015թ.-ի ինն ամիսների ամփոփագիր

2015թ-ի ինն ամիսների ընթացքում ստացվել է 1133 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 868 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 823-ը, մերժվել՝ 35-ը, ընթացքի մեջ է 10 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 21 քաղաքացի, որից 9-ի խնդրանքը բավարարվել է, 10-ինը՝ մերժվել, 2 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 116 դիմումից դրական պատասխան է ստացել 107-ը, մերժվել է՝ 4-ը, 5 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 30 քաղաքացիներից 17-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 10 դիմում մերժվել է, 3 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 13 քաղաքացիներից 11-ը ստացել են դրական պատասխան, 2 դիմում ընթացքի մեջ է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են 23 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 22 քաղաքացիներից 20-ը ստացել են դրական պատասխան, 2 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են 30 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 10 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ